ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» նոյեմբերի 2021թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 7-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
3-ՐԴ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Երևան քաղաքի ավագանու 7-րդ նստաշրջանի 3-րդ նիստի օրակարգը /կցվում է/։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Հ. ՄԱՐՈՒԹՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՕՐԱԿԱՐԳ

1. Երևանի ավագանու 7-րդ նստաշրջանի 3-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Արաբկիր համայնքի «Արաբկիր-Կամար» փակ բաժնետիրական ընկերության կողմից 2018 թվականի տնտեսական գործունեության արդյունքներով հաշվարկված շահու-թաբաժնի և սահմանված ժամկետում վճարում չկատարելու համար հաշվարկված տոկոսների Երևանի բյուջե վճարումից ազատելու մասին:
3. Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 23-ի N310-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
4. Երվանդ Ղազանչյանի և Գալյա Նովենցի հիշատակները հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:
5. Վիլեն Գալստյանի և Նադեժդա Դավթյանի հիշատակները հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:
6. Կարապետ Եղիազարյանի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:
7. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
8. «Երևանի Կենտրոնի աթլետիկայի մանկապատանեկան մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման մասին:
9. «Երևանի Կենտրոնի մանկապատանեկան համալիր մարզադպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության լուծարման մասին:
10. Պայմանագրի գործողության ժամկետը երկարաձգելու մասին:
11. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին: